

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.12.2016թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 91-ը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը և տարածքային կառավարման վարչության պետ Ա. Սողոմոնյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ԶՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2016 թվականի գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփման մասին:

/Զեկ.' գյուղ. և բնապահպան.վարչ. պետ Հ.Տերտերյան /

2. 2017 թվականին մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության աշխատանքային ծրագրի մասին

/Զեկ.' ՏԻ և ՀԳՄ հարցերով.վարչ. պետ Ա.Լալայան /

3. Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների նկատմամբ վարչական հսկողության և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների մասին:

/Զեկ.' քաղաքաշինության վարչ. պետ Լ.Խաչատրյան /

4. Մարզի համայնքների 2016 թվականի տասնմեկ ամիսների բյուջեների կատարման մասին:

/Զեկ.' ֆինանսատնտես.վարչ.պետ Գ.Եղիազարյան /

1.Լսեցին՝

2016 թվականի գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփման մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը :

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանին ու գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանին

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ 2017 թվականի գարնան գյուղատնտեսական տարվա նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու համար /ԶՕԸ-երի հետ համատեղ աշխատանք, գյուղացիական տնտեսությունների և մթերոլ կազմակերպությունների միջև պայմանագրերի կնքման գործընթաց և այլն/:

2.Լսեցին՝

2017 թվականին մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության աշխատանքային ծրագրի մասին աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով. վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

3.Լսեցին՝

Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների նկատմամբ վարչական հսկողության և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների մասին աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Լ. Խաչատրյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը :

4.Լսեցին՝

Մարզի համայնքների 2016 թվականի տասնմեկ ամիսների բյուջեների կատարման մասին աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

Արտահայտվեց՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին՝

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ըստ հարկատեսակների մուտքերի ապահովման ուղղությամբ:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ռ. Աբրահամյանը՝ մարզխորհրդի մասնակիցներին շնորհավորելով գալիք տոների կապակցությամբ :

ՄԱՐԶՊԵՏ՝  Ի. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ